I

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ*

ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Հայագիտությունը գիտությունների մի համակարգ է, որը զբաղվում է հայ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության, մշակույթի, փիլիսոփայության ուսումնասիրությամբ: Այն որպես գիտական ուղղություն սկզբնավորվել է նոր դարաշրջանի արշալույսին՝ XVIII դ. սկզբներին, մեծ և հարուստ ժառանգության հիմքի վրա:

V դ. սկզբին հայոց գրերի գյուտը հզոր խթան դարձավ հայ պատմագրության, գրականության, մշակույթի այնպիսի զարթոնքի, որը բնութագրվեց որպես ոսկեդար: Հետագայում աշխարհաքաղաքական պայմանների բերումով երկիրը և դիտամշակութային կյանքը վերիվարումների ենթարկվեցին, բայց պահպանվեցին նրանց ներուժն ու առաջընթացի միտումները: Անկախություն ձեռք բերելուց հետո X–XIV դդ. դարձան հայագիտական վիթխարի կուտակումների ժամանակաշրջան: Հայ միջնադարյան գիտությունն ու մշակույթը իրենց գրեթե բոլոր դրսևորումներով՝ գրականություն, փիլիսոփայություն, իրավունք, բժշկություն, կերպարվեստ, ճարտարապետություն, հասան զարգացման այնպիսի բարձր աստիճանի, որ որոշ մարզերում միջազգային ճանաչման արժանացան: Մասնագետները վերածննդի նախանշաններ են տեսնում այդ դարաշրջանի հայ մշակույթի մեջ:

Արևելքից եկող խաչնարած ցեղերի ավերածությունները և ապա երկու հզոր պետությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետությունը XV–XVIII դդ. ծանր իրավիճակ ստեղծեցին երկրում: Այնուհանդերձ չընդհատվեց հայ մշակույթի զարգացման շարունակական ընթացքը: Հայերն առաջիններից մեկն անցան տպագրական գյուտի օգտագործմանը, հիմնադրվեց հարուստ ժառանգություն թողած հայ պարբերական մամուլը, շարունակվեց հայ մշակույթի պահպանումն ու զարգացումը: Հայաստանում ստեղծագործ աշխատանքի հնարավորությունների բացակայության պատճառով հայ մշակույթը զարգանում էր գերազանցապես հայկական գաղթաշխարհում:

XVIII դ. սկզբին ծնունդ առավ հայ ժողովրդի պատմության մեջ եզակի գիտամշակութային մի հաստատություն՝ Մխիթարյան միաբանությունը: Վիթխարի է միաբանության, նրա ականավոր դեմքերի՝ Մխիթար Սեբաս-

---

* *Զեկուցում կարդացված «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողովում. Երևան, 15–20-ը սեպտեմբերի:*

տացու, Միքայել Չամչյանի, Ղևոնդ Ալիշանի և նշանավոր մյուս բազմաթիվ գործիչների ներդրումը հայագիտության ասպարեզում:

Նոր դարաշրջանում Եվրոպայի երկրների արևելագետները, կովկասագետ-հայագետները լուրջ ներդրում կատարեցին հայոց գիտամշակութային պատմության ուսումնասիրության գործում: Բավական է հիշատակել միայն Էդվարդ Դյուլորիեի, Վիկտոր Լանգլուայի, Հայնրիխ Հյուբշմանի, Անտուան Մեյեյի, Յոզեֆ Մարկվարտի և շատ ուրիշների անունները: Այնտեղ հիմնվեցին հայագիտական ամբիոններ, կազմակերպվեցին համապատասխան դասընթացներ:

Ռուսաստանում Պետերբուրգի համալսարանը, արևելյան լեզուների Մոսկվայի Լազարյան ճեմարանը, Էջմիածնի Գևորգյան ճեմարանը դարձան հայագիտության զարգացման օջախներ: Պատմաբանասիրական աշխատանքներ էին կատարվում նաև հայ իրականության տարբեր կենտրոններում: Հայագիտական աշխատանքներ ծավալվեցին Նիկոլայ Մառը, Նիկողայոս Ադոնցը, Մանուկ Աբեղյանը, Հրաչյա Աճառյանը, Հովսեփ Օրբելին, Հակոբ Մանանդյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Գարեգին Հովսեփյանը, Ստեփանոս Մալխասյանը, Լևոն, Գրիգոր Ղափանցյանը և շատ ուրիշներ: Այնպես որ, խորհրդային կարգերի հաստատման շրջանում, հայագիտությունն ամուր հիմքեր ստեղծած և զարգացման հունի մեջ մտած, միջազգային հետաքրքրություն ներկայացնող գիտական ուղղություն էր:

Խորհրդային կարգերի ժամանակ խիստ քաղաքականացվեց հասարակական գիտությունների ուսումնասիրությունը: Դրանց գլխավոր խնդիրը դարձավ պետական իշխանության ու կոմունիստական կուսակցության վարած քաղաքականության քարոզչությունը: Այս եղանակով բազմաթիվ աշխատություններ գրվեցին երկրի սոցիալիստական վերափոխումների, կոմունիստական կուսակցության մասին: Ստեղծված գաղափարական պարտադրանքի պայմաններում անհնար դարձավ հայագիտության, մասնավորապես նոր և նորագույն պատմափուլի հիմնահարցերի ազատ ու անկաշկանդ հետազոտումը: Գիտական ճշմարիտ լուսաբանում չէին ստանում, խեղաթյուրված էին ներկայացվում հատկապես XIX դ. երկրորդ կեսի և XX դ. սկզբների ազգային-ազատագրական շարժումների, ազգային կուսակցությունների, Հայաստանի առաջին հանրապետության պատմությունը և այլ հիմնահարցեր: Պատմության հարուստ ու բազմերանգ երևույթները միայն սոցիալ-դասակարգային պայքարի տեսանկյունով մեկնաբանելը, գռեհիկ սոցիոլոգիզմը բացասական ազդեցություն ունեցան անգամ հին և միջնադարյան պատմության, գրականության, մշակույթի ուսումնասիրման հարցերում:

Հայտնի է, որ բոլոր ժողովուրդների կյանքում եկեղեցին նշանակալի դեր է կատարել: Հայ ժողովրդի պարագայում մեր ժողովրդի պատմական ճակատագրի, պետականության կորստի հետևանքով հայոց եկեղեցու նշանակությունն ազատագրական պայքարում, մշակույթի ասպարեզում ավելի մեծ է եղել, քան սեփական պետականություն ունեցող ժողովուրդների կյանքում: Չնայած այդ հանրաճանաչ ճշմարտությանը, Հայաստանում եկեղեցու իրավասությունների սահմանափակումները, նրա նկատմամբ կիրառվող բռնաճնշումները, ճանաչված մասնագետներին եկեղեցական թե-

մատիկայից մեկուսացնելը ավելի ծայրահեղ ձևերով արտահայտվեցին, քան, ասենք, Խորհրդային Ռուսաստանում: Բավական է նշել, որ Ն. Նիկոլսկու «Ռուսական եկեղեցու պատմությունն» ստվարածավալ աշխատությունը 1988 թ. ունեցավ չորրորդ հրատարակությունը, իսկ մենք չունեցանք հայ եկեղեցուն նվիրված որևէ աշխատություն: Ինչպես ընդունված է ասել, այս հարցում մենք ավելի կաթոլիկ էինք, քան Հռոմի Պապը:

Հայ ժողովրդի անցած պատմական ուղու հիմնական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ տարաբախտ պայմանների բերումով հայկական զանգվածները հարկադրված են եղել թողնել հայրենիքը և հանգրվան գտնել աշխարհի տարբեր երկրներում: Այդ եղանակով առաջացել են հայկական բազմաթիվ գաղութներ: Հայտնի է, որ Մեծ եղեռնի հետևանքով այդ գաղթավայրերի բնակչությունը ստվարացավ, առաջացավ հայկական սփյուռքը: Հայաստանի Խորհրդային հանրապետությունը ցավոք, սփյուռքին վերաբերվում էր ոչ ազգային, այլ քաղաքական՝ Խորհրդային իրավակարգի նկատմամբ ունեցած վերաբերմունքի տեսանկյունից: Նման քաղաքականությունը պատնեշ առաջացրեց հայրենիքի և սփյուռքի միջև՝ իր բոլոր բացասական հետևանքներով:

1950-ական թվականների վերջերից անհատի պաշտամունքի քննադատության շնորհիվ մեղմացում կատարվեց գաղափարական քաղաքականության մեջ: Հայագիտության ասպարեզում աշխուժություն սկսվեց, ընդարձակվեց նաև հետազոտությունների թեմատիկ ընդգրկումը: Պատմագիտության մեջ, օրինակ, լայն թափով աշխատանքներ ծավալվեցին ուսումնասիրության ոլորտից դուրս թողնված հայկական գաղթավայրերի պատմության ուղղությամբ: Բազմաթիվ աշխատություններ ստեղծվեցին Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի, Մերձավոր Արևելքի և մյուս երկրների գաղութների վերաբերյալ: Հնարավորություն ստեղծվեց և Մ. Ներսիսյանի խմբագրությամբ հրատարակվեց «Հայերի գենոցիդը Օսմանյան կայսրությունում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուն: Այս աշխատության հրապարակ դալը էական նշանակություն ունեցավ ցեղասպանության հիմնահարցի շուրջը գիտական հետաքրքրությունները խթանելու առումով: Համանման առաջընթաց քայլեր կատարվեցին նաև բանասիրության և արվեստի ասպարեզում: Այդ ամենով հանդերձ, տիրապետող գաղափարախոսության պայմաններում, այդ աշխույժը արմատական նշանակություն ունենալ չէր կարող:

* * *

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև խնդրի մյուս կողմին, այն հարցին, թե ստեղծված իրավիճակում ինչպիսի՞ դործընթաց ունեցավ հայագիտությունը: Ի տարբերություն ազգային հատկանիշն անտեսող ցարական Ռուսաստանի վարչատարածքային կառուցվածքի, Խորհրդային իշխանությունը ստեղծեց ազգային հանրապետություններ, որոնք դարձան տվյալ ժողովրդի համախմբման, գիտության ու մշակույթի կենտրոններ: Հենց միայն ազգային հանրապետությունների ստեղծումն ինքնին ազգային գիտամշակութային կյանքի զարգացման գրավական էր, որքան էլ սահմանափակված լինեին այդ հանրապետությունների իրավունքները:

Գիտությունը և մշակույթը դրվեցին կազմակերպական նոր հիմքերի վրա, նրանց հովանավորությունը վերցրեց պետությունը: Երկիրը պատվեց գիտակրթական, լուսավորական հաստատությունների լայն ցանցով:

Խորհրդային կարգերի առաջին տասնամյակներին հայագիտությունը զարգանում էր հիմնականում Երևանի պետական համալսարանում: Դրան զուգահեռ հիմնվեցին գիտահետազոտական հաստատություններ՝ Հայաստանի գիտական ինստիտուտը (1921 թ.), ակադեմիական սկզբունքով գործող գիտության և արվեստի ինստիտուտը (1925 թ.), պատմության և գրականության ինստիտուտը (1935 թ.), նույն տարում ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղը:

Պատերազմի ահեղ օրերին՝ 1943 թ. հիմնվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Հանրապետության մայր ՌՈՒՀ-ում և գիտական հաստատություններում առաջատար դեր էին կատարում հայագիտության հին սերնդի վերը հիշատակված նշանավոր գործիչները, որոնք և մտան Գիտությունների ակադեմիայի հիմնադիր կազմի մեջ: Ակադեմիան իր հումանիտար հաստատություններով՝ հայոց պատմության, լեզվի, գրականության, արվեստի, արևելագիտության, փիլիսոփայության և իրավունքի, հնագիտության և ազգագրության, տնտեսագիտության գիտահետազոտական ինստիտուտներով սկսեց զբաղվել հայագիտության բոլոր ճյուղերով և պատմական բոլոր գարաշրջաններով:

Հայոց պատմության ասպարեզում սկսվեց հնագույն շրջանից մինչև արդի ժամանակաշրջանի հիմնախնդիրների հետազոտումը: Ուսումնասիրվեցին հայ ժողովրդի կազմավորումը, տեսադաշտից դուրս մնացած երվանդունիների և հետագա շրջանի՝ հին և միջնադարյան Հայաստանի պատմության գրեթե բոլոր հարցերը: Դրանց ուսումնասիրությանը մեծապես նպաստեցին Շենգավիթի, Սևանի ավազանի, Կարմիր բլուրի, Արմավիրի, Արտաշատի, Գառնիի, Դվինի պեղումների արդյունքները:

Հետազոտվեցին նոր և նորագույն ժամանակների սոցիալ-տնտեսական, ազատագրական շարժումների, ինչպես նաև հայկական գաղթավայրերի և սփյուռքի պատմությունը: Հիմնավոր հետազոտվեցին հայ-ռուսական հարաբերությունները իրենց բոլոր դրսևորումներով և բազմաթիվ այլ խնդիրներ: Կատարված ուսումնասիրությունները և ամբարված նյութերը հրապարակվեցին բազմաթիվ մենագրություններում, ժողովածուներում և բազմաքանակ մատենաշարերում: Դրանցից են «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» (15 հ.), «Մերձավոր և Միջին արևելքի երկրները և ժողովուրդները» (21 հ.), «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան» (5 հ.), «Հնագիտական պեղումները Հայաստանում» (21 հ.), «Ազգագրություն և բանահյուսություն» (21 հ.), «Հայկական ձեռագրերի հիշատակարաններ» (6 հ.), «Կովկասը և Բյուզանդիան» (6 հ.), «Հայ-ռուսական հարաբերությունները» (7 հ.), «Դիվան հայ վիմագրության» (8 հ.), «Հայ ժողովրդական հեքիաթներ» (16 հ.) և այլն:

Պատմագիտության բնագավառում կատարված աշխատանքներն ընդհանրացվեցին «Հայ ժողովրդի պատմություն» ութ ստվարածավալ հատորներում (ղեկավար՝ Գ. Դալոյան), որը նախադեպը չունեցող գիտական-ակադեմիական հրատարակություն էր:

Ժողովրդագրության ուղղությամբ շոշափելի աշխատանք է կատարել տնտեսագիտության ինստիտուտը, ներկայացրել է Հայաստանի բնակչության և նրա աշխատանքային ռեսուրսների վերարտադրության, զբաղվածության և սոցիալ-տնտեսական զարգացման ամբողջական պատկերը: Ժողովրդագրության օրինաչափությունների դրսևորման ուղղությունների, միտումների և բնակչության աճի գործոնների դերի բացահայտման ու գնահատման հիման վրա կանխատեսվել է Հայաստանի բնակչության հեռանկարային ժողովրդագրական պատկերը:

Սաեղծվեց այնպիսի ծանրակշիռ աշխատություն, ինչպիսին հայկական հանրագիտարանն է:

1940-ական թվականներից պատմաբանների ավագ սերնդի կողքին, որոնց հետաքրքրության շրջանակները հին և միջնադարյան դարաշրջաններն էին, հրապարակ իջավ նոր սերունդը (Մկրտիչ Ներսիսյան, Աբգար Հովհաննիսյան, Սուրեն Երեմյան, Վարդան Պարսամյան, Վահան Ռշտունի, Բաբկեն Առաքելյան, Կարո Ղաֆադարյան, Լևոն Խաչիկյան, Հակոբ Անասյան, Վազգեն Հակոբյան և շատ ուրիշներ), որն ընդարձակեց հետազոտվող թեմատիկան, զբաղվեց նաև նոր դարաշրջանով: Նրանց 60-ական թվականներին փոխարինելու եկավ 3-րդ սերունդը, վերջինիս այժմ փոխարինում է հայագետների չորրորդ երիտասարդ սերունդը:

Հաջողությունները մեծ են նաև բանասիրության ընդգավառում: Արդյունավետ աշխատանքներ են կատարվել հայոց լեզվի կառուցվածքի և գործառության, պատմության, համեմատական քերականության, բարբառագիտության, բառարանագրության ասպարեզում: Ուսումնասիրվել են գրաբարի, միջին հայերենի, վաղ աշխարհաբարի բառապաշարը, գործառական, իմաստային առանձնահատկությունները: Հրատարակվել են Ստեփանոս Մալխասյանցի հայերենի բացատրական, ժամանակակից հայոց լեզվի բացատրական քառահատոր, հայոց լեզվի հոմանիշների, դարձվածաբանական և հայերենի ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական, ռուս-հայերեն, հայ-ռուսերեն և այլ բառարաններ: Ավարտվում է հայոց լեզվի պատմության եռահատորյակը: Ստեղծվել է ժամանակակից արևելահայ և արևմտահայ հայերենի բառապաշարի շտեմարան: Կազմվել են նաև բառարանների և հեղինակային լեզվի ուսումնասիրման քարտարաններ, որտեղ քարտերի քանակն անցնում է 15 միլիոնից:

Գրականագիտության մեջ ևս լայնածավալ ու արժեքավոր աշխատանքներ են կատարվել: Ուսումնասիրվել է միջնադարյան հայ գրականությունը և 9 գրքով լույս է տեսել «Հայ տաղերգուները» մատենաշարը: Հրատարակվել է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» կոթողային երկի գիտական բնագիրը: Բազմաթիվ աշխատություններ են հրապարակվել հայ նոր և նորագույն շրջանի գրողների ստեղծագործությունների վերաբերյալ: Տպագրվել են հայ դասական գրողների երկերի լիակատար ժողովածուներ: Վերջին տասնամյակներում ուշադրության կենտրոնում պահվեց նաև սփյուռքահայ գրականությունը և ընդհանրացնող ուսումնասիրություն հրապարակվեց հայ գրականության այդ հատվածի մասին: Մշակվեցին նաև գրականության տեսական շատ հարցեր: Հաղթահարվեցին Բաֆֆու և Ռաֆայել Պատկանյանի ստեղծագործությունների նկատմամբ եղած

ոչ հիշտ մոտեցումները: Կատարված ուսումնասիրությունների հանրագումարը եղավ «Հայ նոր գրականության» հինգհատորյակը (խմբ. Ս. Սարինյան), որին մասնակցեցին հանրապետության լավագույն ուժերը:

Բանագիտության բնագավառում արդյունավետ է եղել բազմաժանր ու հարուստ բանահյուսական նյութերի հավաքումն ու գիտական մշակումը: Կազմվել են ազգագրական առանձին շրջանների և տարբեր ժանրերի բանահյուսական ժողովածուներ: Հետազոտվել է «Սասնա ծռեր» էպոսը և տպագրվել 100-ից ավելի պատումներ:

Ուսումնասիրվել են հարուստ ժառանգությամբ մեզ ավանդված արևելահայ և արևմտահայ մամուլի գլխավոր օրգանները, կազմվել է հայ պարբերական մամուլի մատենագիտական համահավաք ցուցակ:

Բանասիրության ասպարեզում հայագետների ավագ սերնդին աշակերտեցին և նրանց գործը շարունակեցին Արարատ Ղարիբյանը, Գուրգեն Սևակը, Արամ Ղանալանյանը, Գևորգ Ջահուկյանը, Էդվարդ Աղայանը, Մկրտիչ Մկրյանը, Սուրեն Աղաբաբյանը, Հրանտ Թամրազյանը, Էդվարդ Ջրբաշյանը, Սերգեյ Սարինյանը, Լևոն Հախվերդյանը և շատ ուրիշներ: Ասված ծանրությունը վերցրին հաջորդ երկու սերունդները:

Արվեստագիտությունը որպես գիտական ուղղություն սկիզբ առավ միայն վերջին հարյուրամյակում: Հանրապետությունում արվեստագիտության զարգացման գլխավոր գիտական կենտրոնը դարձավ ԳԱ արվեստի ինստիտուտը: Վանի թագավորության և հելլենիստական շրջանի բնակավայրերի սլեղումները հնարավորություն տվեցին բացահայտել հին շրջանի հայ ճարտարապետության ակունքները: Ճարտարապետության հանգուցային հարցերն իրենց լուծումը գտան Թորոս Թորամանյանի, Յոզեֆ Ստրժիգովսկու և ուրիշների աշխատություններում: Հայ ճարտարապետության անցած ուղին ընդհանրացրած ներկայացրեց Վարազդատ Հարությունյանը:

Հիմնավոր ուսումնասիրվեց միջնադարյան հայ ճարտարապետությունը: Արվեստի ինստիտուտի և Միլանի պոլիտեխնիկական ինստիտուտի մասնագետների արդասավոր համագործակցության շնորհիվ հրապարակ եկան «Հայ ճարտարապետության վավերագրեր» հայերեն և անգլերեն մատենաշարի 23 պրակները: Համատեղ ուսումնասիրություններն ամփոփվեցին Պաուլո Կունեոյի «Հայաստանի ճարտարապետությունը 4–19-րդ դարերում» խորագիրը կրող երկհատորյակում: Տպագրվեցին աշխատություններ նորագույն շրջանի ճարտարապետության մասին:

Հարուստ անցյալ և XX դ. նվաճումներ ունեցող հայկական կերպարվեստի ուսումնասիրությունը լայն ծավալ ստացավ խորհրդային իշխանության տարիներին: Հիմնավոր ուսումնասիրվեց (Գարեգին Հովսեփյան, Սիրարփի Տեր-Ներսիսյան, Լիդիա Դուրնովո և ուրիշներ) միջազգային ճանաչման արժանացած միջնադարյան մանրանկարչությունը: Նկատելի աշխատանքներ կատարվեցին նաև Հայաստանի նոր և նորագույն շրջանի կերպարվեստի պատմությունը ներկայացնելու ուղղությամբ: Պատրաստվում է հայ կերպարվեստի պատմությունն ընդհանրացնող բազմահատոր աշխատություն: Վերջին տասնամյակներում ուշադրության կենտրոնում է պահվում դեկորատիվ-կիրառական արվեստի ուսումնասիրությունը:

XX դ. սկզբում հայ երաժշտության ազգային առանձնահատկությունները խորաթափանց բացահայտող մեծանուն Կոմիտասի ստեղծած հենքի վրա սկիզբ առավ անցյալի ժառանգության և ժամանակակից հայ երաժշտության հետազոտությունը: Գրվեցին ինչպես նշանավոր կոմպոզիտորների մասին, այնպես էլ երաժշտության շարունակական զարգացմանը նվիրված աշխատություններ: Հաջողություններ կան երաժշտական ֆոլկլորագիտության ասպարեզում: Արվեստի ինստիտուտի ձայնադարանում հավաքված և մշակված է ժողովրդական երաժշտության ավելի քան 20000 ձայնագրություն: Սկսվել է հայ ավանդական երաժշտության համակարգչային բանկի ստեղծման աշխատանքը:

1950-ական թվականներից սկսեցին երևան գալ թատերագիտական տարբեր աշխատություններ, որոնց մեծ մասը նվիրված էր հայ բեմի նշանավոր վարպետներին (Ռուբեն Զարյան, Գառնիկ Ստեփանյան և ուրիշներ): Գրվեց հայ թատրոնի 2000-ամյա անցյալի մասին աշխատություն (Գ. Գոյան): Ուսումնասիրվեց XIX–XX դդ. հայ թատրոնի պատմությունը (Լևոն Հախվերդյան, Հենրիկ Հովհաննիսյան): Կազմվեց հայ թատրոնի պատմության տարեգրությունը:

Վերջին տասնամյակներում որոշակի զարգացում է ապրել հայ արվեստագիտության ամենաերիտասարդ ճյուղը՝ կինոգիտությունը:

Այսպիսով, խորհրդային իշխանության 70 տարիների գաղափարական պարտադրանքի ու կաշկանդումների պայմաններում անդամ ազգային գիտակրթական բազում հաստատությունների առկայությունը և դրանց բեղուն գործունեությունը մեծապես խթանում էին հայագիտության զարգացումը: Արդյունքում՝ վիթխարի նվաճումներ ունեցանք հայագիտության բոլոր բնագավառներում:

* * *

Հայաստանի անկախ հանրապետության ծննդով հայագիտությունը դարձավ ազգային-հասարակական կյանքի վրա ներազդող, նրան ուղղություն տվող առավել հզոր գործոն: Նրա դերը Հայաստանի քաղաքական անկախության պայմաններում դժվար է գերագնահատել: Հայագիտությունն է կոչված խթանել ազգի հոգևոր-մշակութային վերազարթոնքը, պահպանել ժողովրդի մշակած դարավոր ավանդությունները, նրա ազգային նկարագիրը, սերունդներին կրթելու, հայեցի դաստիարակելու և հայրենիքին նվիրված քաղաքացիներ պատրաստելու սուրբ գործը: Նա կոչված է իր ծանրակշիռ նպաստը բերելու համազգային հոգեբանության մշակմանը, ազգային միասնության գաղափարին: Արդի ժամանակաշրջանում հայագիտությունը վերածվում է հայ ժողովրդի հետագա առաջընթացի հուժկու ազդակի, ազգային անվտանգության ապահովման էական լծակի: Ահա թե ինչու հայագիտության զարգացումը պետք է դառնա պետության ազգային քաղաքականության առաջնային ուղղություններից մեկը և նպատակաուղղվի Հայաստանի անկախ պետականության կայացմանն ու հզորացմանը:

Հայագիտությունը կարող է կատարել իրեն վերապահված այդ մեծ առաքելությունը, եթե հիրավի դառնա պետության հատուկ հոգածության

առարկա, ստանա արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ հնարավորություններ ու միջոցներ:

Մի պահ, երբ փորձում ենք հանրագումարի բերել անկախության 12 տարիների արդյունքները, ախուր իրավիճակի առաջ ենք կանգնում: Անտարակույս, ստեղծագործական աշխատանքի ազատության շնորհիվ հրապարակ եկան նորովի գրված արժեքավոր առանձին աշխատություններ, դասագրքեր, գոյություն ունեցող մատենաշարային հրատարակություններին ավելացան որոշ նոր հատորներ: Սակայն դրա հետ մեկտեղ հասարակական գիտությունների ոլորտը լցվեց նաև գիտական մակարդակ չունեցող, մարդու մտքին ու հոգուն ոչինչ չտվող անորակ գրականությունն:

Անցման շրջանի դժվարությունների, ՀՀ բարձրագույն ատյանների ղեկավարության անտարբերության, գիտության ոլորտի գործիչների նախաձեռնության պակասի պատճառով, անկախության ընձեռած հնարավորություններին և պահանջներին համապատասխան չբարեփոխվեց հայագիտության բնագավառը: Այն փաստորեն մնաց խորհրդային տարիներին մշակված մոտեցումների շրջանակներում:

Տիրապետող էր այն մտայնությունը, որ անկախության շնորհիվ բնականոն, համատեղ աշխատանքներ կծավալվեն սփյուռքի մասնագետների հետ: Չիրականացան այդ ցանկությունները, եթե չասենք նահանջ կատարվեց: Վերացան խորհրդային տարիներին գործող սփյուռքի հետ մշակութային կապերի կոմիտեն և ԳԱ սփյուռքի պատմության ու մշակույթի գիտահետազոտական բաժինը: Ցավոք, պետք է արձանագրել, որ մեզ մոտ հրապարակվեց աշխատություն, որում միակողմանի գնահատվեց արտերկրի որոշ մասնագետների վաստակը, և որը հատկապես սփյուռքի մասնագետների շրջանում դժգոհության ալիք առաջացրեց:

Արտերկրի հայագետների հետ հարաբերվելու դժվարությունները և խյուրիմացությունները առաջանում են գերազանցապես տեղեկատվության պակասից: Այնտեղի գիտամշակութային, կրթական ներուժի, նրանց գործունեության մասին չունենք բավարար տեղեկատվություն, առանց որի անհնար է համագործակցությունը: Հայրենիքում ապրողներս չգիտենք սփյուռքը, իսկ այնտեղ բնակվողները լիովին իրազեկ չեն Հայաստանում կատարվող խորքային գործընթացներին:

Խորհրդային տարիներին, հասկանալի պատճառով ոչ միայն լիարժեք համագործակցություն չի եղել, այլև մեզ մոտ աշխատանքներ չեն կատարվել արտասահմանի հայագիտական կյանքը լուսաբանելու ուղղությամբ: Մենք բարոյական պարտքի թելադրանքով ենք նշում, որ տարբեր երկրներում դժվարին պայմաններում մասնագետները նվիրվել են հայագիտությանը, գրվատելի աշխատանքներ կատարել, որոնք ինչպես հարկն է չեն արժեվորվել մեզանում:

Անկախության ընձեռած հնարավորությունները հիրավի մեծ և ընդգրկուն խնդիրներ են դնում հայագիտության առջև անցյալից եկող թերությունները հաղթահարելու, նրա հետագա զարգացումն ապահովելու առումով: Անհրաժեշտություն է զգացվում մի կողմից համակարգել աշխատանքներն արտերկրի հայագետների հետ, մյուս կողմից կոնկրետ ուսումնասիրել սփյուռքի հայ զանգվածների պատմության, լեզվի, գրակա-

նության, արվեստի հարցերը և ասլա ստեղծել ընդհանրացնող հիմնավոր աշխատություններ:

Հայ ազգային կամ ավանդական կուսակցությունների մասին հրապարակվել են ոչ սակավ աշխատություններ: Դրանք գրվել են տվյալ կուսակցության գործիչների կողմից, ուստի և լիովին անաչառ լինել չեն կարող: Խորհրդային Հայաստանում ստեղծված աշխատությունները խիստ քաղաքականացված են և գիտական առումով նշանակալի արժեք չեն ներկայացնում: Հասունացած պահանջ է դարձել այս հիմնահարցը նորովի ու համակողմանի հետազոտել և ստեղծել գիտական ակադեմիական աշխատություններ:

Մաղաքիա Օրմանյանի 70–80 տարի առաջ հրատարակած կոթողային աշխատությունից հետո չի ստեղծվել հայ եկեղեցու պատմությունն ընդհանրացնող աշխատություն, այն պարագայում, երբ Օրմանյանից հետո սկզբնաղբյուրների հրատարակման և եկեղեցու հետ առնչվող հարցերի ուղղությամբ նշանակալի ուսումնասիրություններ են կատարվել: Ցարդ գիտական պատշաճ լուսաբանում չեն ստացել սլետության բացակայության պայմաններում հայ եկեղեցու գործառնությունները, եկեղեցի-պետություն հարաբերությունները, հայ առաքելական եկեղեցու ժողովրդին ավելի մոտ կանգնած լինելու հանգամանքը և համանման բազմաթիվ այլ հարցեր: Ցավոք, քրիստոնեությունը սլետական կրոն հռչակելու 1700-ամյա հոբելյանական միջոցառումների շրջանակներում ևս չկարողացանք հարցին գրական լուծում տալ: Վաղուց է հասունացել հայ եկեղեցու պատմությանը նվիրված ծանրակշիռ աշխատության ստեղծումը:

Առաջիկայում հարկավոր է կարող ուժերը համախմբել և նպատակաուղղել ավարտելու հայ ժողովրդի, հայ գրականության, արվեստի, հնագիտության, փիլիսոփայության ամբողջական պատմությունն ընդհանրացնող բազմահատոր աշխատությունները, ազատել այդ պատմությունները սոցիալ-դասակարգային միակողմանի մոտեցումների բեռից, իսկ նոր և նորագույն դարաշրջաններում դաղափարական տուրքերից և հարկադրական շրջանցումներից: Բազմահատորներում հարկ է հիմնավոր լուսաբանել հայկական գաղթավայրերի և սփյուռքահայության պատմությունը:

Պատմագիտության բնագավառում, քանի որ իրական կյանքից չեղումները եղել են ավելի շատ, առանձնահատուկ կարևորություն է ստանում առաջին հերթին նոր մոտեցմամբ հայ ժողովրդի ամբողջական պատմության քառահատորյակի ստեղծումը: Պատճառաբանված կլիներ ուշադրության կենտրոնում սլահել հատկապես Հայկական լեռնաշխարհում պետական կազմավորումների, հայ ժողովրդի կազմավորման, հին շրջանի հայկական մշակույթի պատմությունը վերջինս դիտարկելով առաջավորասիական հին քաղաքակրթությունների ընդհանուր համատեքստում, ցույց տալ Հայաստանում քրիստոնեության ընդունման պատմամշակութային նշանակությունը, քննարկել Արևմտյան Հայաստանի պատմության, ժողովրդագրության, հայ-թուրքական հարաբերությունների, հայ ազատագրական շարժման հիմնահարցերը, հետազոտություններ ծավալել XX դ. իրականացված ցեղասպանության, դրա հետևանքները բացահայտելու ուղ-

ղությամբ: Գիտականորեն հիմնավորված ներկայացնել Հայաստանի առաջին հանրապետության, կոմունիստական կուսակցության, Խորհրդային Հայաստանի պատմությունը:

Արդիական և հույժ կարևոր պահանջ է բազմահատորում գիտականորեն ներկայացնել Հայաստանի երրորդ հանրապետության պատմությունը: Լուսաբանել անցումային շրջանի սոցիալական ձևափոխումները, ազգային-քաղաքական գործընթացները, զարարաղյան ադատագրական պայքարը և այլ հարցեր, որոնք ունեն ինչպես ճանաչողական, այնպես էլ կիրառական նշանակություն:

ԳԱԱ պատմության ինստիտուտը վերջին տարիներին ուշադրության կենտրոնում է պահում ժողովրդագրության հարցերը, մասնավորապես պատմական անցյալում բնակչության էթնիկական կազմում կատարվող տեղաշարժերը: ԱՄՆ-ում Ռիչարդ Հովհաննիսյանի նախաձեռնությամբ ու գլխավորությամբ պարբերաբար հրավիրվում են պատմական Հայաստանի էթնոտարածքային առանձին շրջանների ժողովրդագրությանը նվիրված գիտաժողովներ, որոնց նյութերը տպագրվում են առանձին գրքերով: Նպատակահարմար է, ինչ-որ եղանակով, կամրջել այդ երկու կենտրոններում կատարվող աշխատանքները:

Հրատապ է դարձել «Հայոց պատմության ատլասի» հրատարակումը: Արևելագետ-հայագետների առաջնահերթ խնդիրներից է լինելու լուսաբանել Հայաստանի տեղն ու դերը անդրկովկասյան-մերձավորարևելյան տարածաշրջանի պետությունների ժամանակակից պատմության իրողությունների ոլորտում:

Բանասիրության բնագավառում առանձնահատուկ կարևորություն ունի հայերենագիտությունը հայոց լեզվի ուսումնասիրման, մշակման, զարգացման, կիրառական ոլորտների ընդլայնման, հայերենին չտիրապետող զանգվածներին մայրենի լեզուն ուսուցանելու հիմնահարցը: Այդ առումով հետազոտություններն ընթանալու են հայոց լեզվի պատմության, կառուցվածքի և գործառության, Հայաստանի և սփյուռքի հանրալեզվաբանական վիճակի հետազոտության միասնական դրական միտումները խթանելու, դրական լեզվի զարգացումն ապահովելու ուղղությամբ: Հայոց լեզվի ավանդական թեմատիկայի հետազոտմանը զուգընթաց սկզբնավորվելու են նոր ուղղություններ հանրալեզվաբանությունը, հոգելեզվաբանությունը, մաթեմատիկական լեզվաբանությունը: Խորացվելու է հայերենագիտության մեջ հաշվողական տեխնիկայի կիրառումը: Առաջիկա տարիներին ավարտին է հասնելու բարբառագիտական ատլասի կազմումը: Ավարտվելու է նաև հայերենի (արևմտահայ և արևելահայ) բառապաշարի համակարգչային շտեմարան կազմելու աշխատանքը:

Գրականագիտության ասպարեզում հրատապ է դարձել հայ գրականության անցյալի շատ հարցեր վերանայելու հետ մեկտեղ միասնության մեջ դիտարկել հայաստանյան և սփյուռքի գրականությունները, ճշգրտել նախկինում տրված գնահատականները: Ուսումնասիրել հայ գրականության ազգային առանձնահատկությունները և զարգացման օրինաչափությունները, հայ միջնադարյան գրականության տիպաբանական առնչությունները: Հանգամանորեն քննարկել և իմաստավորել մեր օրերում տե-

ղատվություն ապրող գրական կյանքի ընթացքը: Ստեղծել հայ գրականության ամբողջական պատմության եռահատորը:

Բանագիտության առաջ ծառացած են բանահյուսության համեմատական ուսումնասիրությունը, բանահյուսական հուշարձանների այլալեզու թարգմանությունների, հայկական հեքիաթների համաբարբառների կազմումը:

Արվեստաբանության բնագավառում ևս առաջնահերթ խնդիր է հայ գեղարվեստական մշակույթի անցած ճանապարհի ճշմարտացի լուսաբանումը հատուկ ուշադրության դարձնելով XX դ. արվեստի տարբեր ճյուղերում կատարելիք անհրաժեշտ վերանայումներին ու վերագնահատմանը: Ավարտել Կոմիտասի երկերի և հայ ավանդական երաժշտության մատենաշարի հրատարակումը: Ավարտին հասցնել «Հայկական ճարտարապետության պատմության» վեցհատորյակը: Հայ արվեստագիտության մեջ առաջին անգամ ներկայացնել ազգային կերպարվեստի ամբողջական պատմությունը: Վեր հանել արվեստի տարբեր ասպարեզներում ուրիշ ժողովուրդների գեղարվեստական մշակույթի հետ ունեցած առնչություններն ու փոխազդեցությունները:

Հայ փիլիսոփաների առաջնահերթ խնդիրներն են լինելու մեթոդաբանական նոր մոտեցմամբ փիլիսոփայական մտքի բազմադարյան պատմության համակարգված լուսաբանումը, քննական բնագրերի հրատարակումը, ազգային գիտակցության, գլոբալիզացիայի և ազգային մշակութային մոդելների փոխհարաբերության հարցերի մշակումը:

Սոցիոլոգների ուշադրությունը բևեռվելու է անցումային շրջանում քաղաքացիական հասարակության հիմնական ինստիտուտների ձևավորման, զանգվածային միգրացիայի, էթնոմշակութային գործընթացների, բնակչության աղքատացման հիմնախնդիրների վրա:

Իրավունքի գծով հետազոտություններն ընթանալու են գլխավորապես պառլամենտի և պառլամենտարիզմի, ազգային օրենսդրության համակարգի կատարելագործման ու զարգացման հիմնական միտումները բացահայտելու ուղղությամբ:

Ծրագրվում է ստեղծել հայ ժողովրդի պատմությանը, գրականությանը, արվեստին վերաբերող գիտահանրամատչելի և գիտաճանաչողական ոչ ծավալուն աշխատություններ, միաժամանակ նախատեսվող բազմահատորների համառոտված տարբերակներ և դրանք հրատարակել օտար լեզուներով: Վերջիններս նպատակաուղղված կլինեն մյուս ժողովուրդների շրջանում հայ ժողովրդի իրական պատկերը ձևավորելուն:

Հայագիտության զարգացման հիմնական գրավականը փաստական նյութի առկայությունն է, առանց որի անհնար է որևէ իրողության ճշմարիտ պատկերը ներկայացնել: Առաջիկա տարիներին շարունակվելու են սկզբնաղբյուրների և նյութերի վերը հիշատակված մատենաշարերի հրատարակությունները: Ավելի մեծ ծավալ է ընդունելու մատենագրական տարաբնույթ կոթողային հուշարձանների ուսումնասիրությունը, քննական բնագրերի կազմումը: Հայ գրականության և արվեստի ասպարեզում հատուկ նշանակություն է տրվելու գեղարվեստական մշակույթի փաստական նյութի կուտակմանը և տարեգրությունների ստեղծմանը:

Նախատեսվում է ծրագրված աշխատանքներ կազմակերպել և նոր թափ հաղորդել կորստյան վտանգի առաջ կանգնած, մեզնից հեռացող սերնդի հետ անհետացող ազգագրական, երաժշտական, բանահյուսական նյութերի հավաքմանը: Հրատարակվելու են մինչ այժմ մասնագետների սեփականությունը չդարձած կամ բացթողումներով հրապարակված փաստաթղթերն ու նյութերը: Նորագույն շրջանի մասնագետների համար հույժ կարևոր է ձեռքի տակ ունենալ խորհրդային իշխանության կառավարական բարձրագույն ատյանների՝ Կոմկուսի կենտկոմի բյուրոների, կառավարության և Գերագույն խորհրդի նիստերի արձանագրությունները և այլ փաստաթղթերը: Հետևաբար, մասնագետների առաջ պետք է բացել բոլոր արխիվների դռները:

Լուրջ մահոգություն է հարուցում հայագիտության կադրերի հարցը: Մասնագիտության առումով հանրապետությունը, ինչպես նաև սփյուռքն ունեն մեծ ներուժ, սակայն եթե ներկայումս գործնական քայլեր չձեռնարկվեն մասնագետներ պատրաստելու ուղղությամբ, հայագիտությունը կմնա արդի ճգնաժամային վիճակում: Կառաջանա դատարկություն, կստեղծվի մասնագետների այնպիսի պակաս, որ դժվար ու անդամ անհնարին կդառնա այդ պակասը լրացնել: Հետևաբար, անհրաժեշտ է առկա ներուժը խելամտորեն օգտագործել երիտասարդ մասնագետներ պատրաստելու համար:

Հայկական դպրոցները և ԲՈՒՀ-երի հումանիտար ֆակուլտետներն են հայագիտությունը սնող ակունքները: Հետևաբար, առաջնահերթ է դառնում կրթության համակարգի բարելավումը: Հարկավոր է գործնական քայլեր կատարել սփյուռքում հայկական դպրոցների նվազումը կանխելու, Հայաստանի ծայրամասային գյուղական շրջանները և սփյուռքի դպրոցները որակյալ մանկավարժներով ապահովելու ուղղությամբ: Տեսադաշտից դուրս է մնում հատկապես Խորհրդային Միության նախկին տարածքի, ուր հանդիպվան է գտել մեր ժողովրդի գրեթե մեկ երրորդը, պատանիների հայերեն ուսուցման հարցը: Այնտեղ չկան մանկավարժներ, չկան դասագրքեր և ուսուցումը կազմակերպելու այլ պարագաներ: Հրատապ խնդիր է տեղի մասնագետների հետ սփյուռքի դպրոցների համար համապատասխան դասագրքերի, դրանց էլեկտրոնային տարբերակների ստեղծումը:

Հարկավոր է հանրակրթական դպրոցներում կազմակերպել գրաբարի ուսուցում գրանով հնարավորություն տալ պատանիներին ծանոթանալու դասական ուղղագրությանը: ԲՈՒՀ-երի հումանիտար ֆակուլտետներում բարելավել օտար և հին լեզուների ուսուցումը: Ստեղծել հայոց պատմության ԲՈՒՀ-ական դասագիրք: Քայլեր կատարել ուսուցիչների, ինչպես նաև դասախոսների որակավորումը բարձրացնելու ուղղությամբ: Հարց բարձրացնել ՀՀ կառավարության առաջ ավելացնելու հայագիտության գծով հատկացվող ասպիրանտական տեղերի քանակը: Հումանիտար մասնագիտությունների գծով թեկնածուի գիտական աստիճան հայցողների համար պարտադիր համարել հայոց լեզվի և հայոց պատմության իմացությունը: Հայոց պատմությունից և հայոց լեզվից գիտելիքների ստուգումը պարտադիր դարձնել նաև պետական ծառայողի համար:

Հայագիտության առաջ ծառացած խնդիրները բազում են և բազմազան, ուստի խելամիտ կլիներ վեր հանել հանգուցային հիմնահարցերը: Համաժողովի մասնաճյուղերում տարբեր թեմաներին նվիրված դիտական զեկուցումների հետ մեկտեղ ուշադրությունը կենտրոնացնել առավելապես հայագիտության կոնկրետ բնագավառում տիրող իրավիճակը համակողմանի քննարկելու և հաակապես այն բարելավելու խնդիրների վրա:

Գիտության այս ուղղության հեռանկարները ուրվագծելու ժամանակ, եթե մենք բավարարվենք միայն ընդհանուր գատողություններով ու ցանկություններով, ապա որևէ նպատակի չենք հասնի: Հայագիտության զարգացումը խթանելու, այն կանոնակարգված ուղու վրա դնելու համար անհրաժեշտ է գործնական որոշակի քայլեր կատարել:

Արդի դժվարին կացության պատճառները, երբ փորձում ենք բացահայտել, ապա, ի վերջո, կանգնում ենք երկու հիմնախնդրի առաջ: Դրանք են՝ ֆինանսական միջոցների պակասը և աշխարհով մեկ ցրված հայագիտական օջախների միջև փոխագարձ կապերի ու տեղեկատվության բացակայությունը:

Նկատի առնելով հայագիտության նշանակությունը մեր ժողովրդի և պետության համար, հարկավոր է հարց բարձրացնել կառավարության առաջ, որպեսզի հայագիտությունը դիտվի որպես հայկական պետության ազգային քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը:

Պահանջ է զգացվում պետության հովանավորությամբ ստեղծել հայագիտական հիմնադրամ, կազմակերպել հայագիտական միջազգային կենտրոն, հիմնել պարբերական, որը կենարոնի գլխավորությամբ ներդաշնակի, համակարգի և լայն տեղեկատվություն հաղորդի այս ասպարեզում աշխարհում կատարվող գործընթացների մասին: Նախատեսվող կենտրոնում, հիմնադրամում և պարբերականում ընդգրկել Հայաստանի և սփյուռքի լավագույն մասնագետներին: